

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը մասնակցել է Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի հերթական նիստին

Հուլիսի 21-ին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը մասնակցել է Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի հերթական նիստին: Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը: Ներկա էին «Սեյվ դը Չիլդրեն» միջազգային կազմակերպության, «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության, «Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինք» միության, «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոնի նախագահներն ու ծրագրի ղեկավարները:

Քննարկվեցին 2016 թվականին հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներին համակարգված լուծումներ տալու ծրագրերը, սոցիալական ձեռնարկությունների իրավական կարգավիճակի հստակեցմանը վերաբերող խնդիրները, Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և դրա հետ առնչվող միջոցառումների ցանկը հաստատելու մասին կառավարության որոշման նախագիծը:

Վ. Դավթյանը, անդրադառնալով սոցիալական ձեռնարկությունների իրավական կարգավիճակի հստակեցմանը վերաբերող խնդիրներին, կարևորել է ՀՀ օրենքում «Սոցիալական ձեռնարկություն» հասկացության հստակեցման անհրաժեշտությունը, ինչը առավել հստակ և արդյունավետ կդարձնի սոցիալական ձեռնարկությունների գործունեության և արտոնությունների սահմանման շրջանակները: